*ԱՄՓՈՓԱԹԵՐԹ*

*«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ նախարարությունների և պետական կառավարման մարմինների առաջարկությունների և առարկությունների վերաբերյալ*

| *Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, համարը* | *Առարկության, առաջարկության բովանդակությունը* | *Եզրակացությունը Կատարված փոփոխությունները* | *Կատարված փոփոխությունները* |
|---|---|---|---|
| | | | |
| *ՀՀ ազգային անվտանգության ծառայություն 27.08.16թ. 11/594* | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | - | |
| *ՀՀ ֆինանսների նախարարություն 30.08.16թ. 01/11-1/21149-16* | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | - | |
| *ՀՀ արտաքին գործերի նախարարություն 15.09.16թ. 1111/09374* | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | - | |
| *ՀՀ արդարադատության նախարարություն 20.09.16թ. 02/11768-16* | 1. Նախագծի նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել ՀՀ քաղաքացու անձնագրի մասին և Նույնականացման քարտերի մասին ՀՀ օրենքներին՝ նկատի ունենալ;ով նախագծի հիմնավորման և Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի պահանջները: | 1. Առաջարկությունն ընդունվել է: | 1. Նախաբանում կատարվել է համապատասխան լրացումը: |

| | | | |
|---|---|---|---|
| | 2. Նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետի <<դ>> կետը ունի խմբագրման կարիք. Մասնավորապես՝ <<պարբերությունը հանել>> բառերը անհրաժեշտ է փոխարինել << պարբերությունը ուժը կորցրած ճանաչել>> բառերով: | 2. Առաջարկությունն ընդունվել է: | 2. <<պարբերությունը հանել>> բառերը փոխարինվել են <<պարբերությունը ուժը կորցրած ճանաչել>> բառերով: |
| | 3.Նախագծի 1-ին կետի 10-րդ ենթակետով նախատեսվում է կանոնադրության 19.2. կետի 1-ին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն, որով 1-ին խմբի հաշմանդամներին իրավունք է վերապահվում անձնագիր ստանալ ներկայացուցչի դիմումի հիման վրա՝ դիմումին կցելով հաշմանդամության վկայականը կամ վկայականի նոտարական կարգով վավերացված պատճենը:<br>Գտնում ենք, որ << քաղաքացիական օրենսդրության ներկայացուցչության ինստիտուտը կանոնակարգող դրույթների տրամաբանությունից ելնելով, վերոնշյալ կատեգորիայի քաղաքացիների անձնագրերը ներկայացուցչի կողմից ստանալու դեպքերի համար անհրաժեշտ է սահմանել նաև դիմումին կից ներկայացուցչի լիազորությունները հավաստող լիազորագիր ներկայացնելու պահանջ: | 3. Առաջարկությունն ընդունվել է: | 3. 1-ին կետի 10-րդ ենթակետում կատարվել է համապատասխան լրացում՝ լիազորագիր ներկայացնելու պահանջի վերաբերյալ: |

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

***«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության մշտապես գործող նախարարական պետաիրավական կոմիտեի 24.11.2016թ. նիստի թիվ 16.3/383791/-16 արձանագրային հանձնարարականի 1-ին կետով ներկայացված առաջարկությունների վերաբերյալ***

| *Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, համարը* | *Առարկության, առաջարկության բովանդակությունը* | *Եզրակացությունը Կատարված փոփոխությունները* | *Կատարված փոփոխությունները* |
|---|---|---|---|
| | | | |
| ՀՀ կառավարության մշտապես գործող նախարարական պետաիրավական կոմիտե 24.11.2016թ. 16.3/383791/-16 | 1.1 ՀՀ կառավարության աշխատակազմի պետաիրավական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սեդրակ Բարսեղյանի առաջարկությամբ որոշման նախագծից հանել ծնողների անունը, ազգանունը չնշելու պահանջը: | 1.1 Առաջարկությունն ընդունվել է: | 1.1 Կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| | 1.2 ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի առաջարկությամբ հստակեցնել հաշմանդամներին վերաբերող կարգավորումը. | 1.2 Առաջարկությունն ընդունվել է: | 1.2 Կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| | 1.3 Որոշման նախագծով նախատեսված անձնագրի տրամադրման 5-օրյա ժամկետը | 1.3 Ընդունվել է ի գիտություն: | 1.3 Նախագծից հանվել է անձնագրի տրամադրման |

| | | | |
|---|---|---|---|
| | 10-օրյա ժամկետով փոխարինելու վերաբերյալ հարցին անդրադառնալ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի կողմից ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանին ներկայացնելուց հետո. | | 5-օրյա ժամկետը 10-օրյա ժամկետով փոխարինելու վերաբերյալ դրույթը: |
| | 1.4 Որոշման նախագծի վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարություն: | 1.4 Առաջարկությունն ընդունվել է: | 1.4 Նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: |
| | 1.5 ՀՀ կառավարության աշխատակազմի <<ԷԿԷՆԳ>> ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Թունյանի առաջարկությամբ ներկայացնել օրենսդրական փոփոխության վերաբերյալ առաջարկություն՝ կենսաչափական անձնագրերում ևս ծնողների անունները և ազգանունները նշելու պարտադիր պահանջի սահմանման վերաբերյալ: | 1.5 Առաջարկությունն ընդունելի է, սակայն 2017թ. հունվարի 1-ին ավարտվում է «Լեհական արժեթղթերի արտադրամաս» /ՊՎՊՎ/ ԲԸ հետ կնքած պայմանագրի գործողության ժամկետը և ներկայումս մշակվում է տեխնիկական առաջադրանք՝ նոր մրցույթ հայտարարելու համար: Տեխնիկական | |

| | | | |
|---|---|---|---|
| | | առաջադրանքում, ի թվս մի շարք այլ նոր պայմանների, կներառվի նաև երեխաների ծնողների տրվյալները կենսաչափական անձնագրերում տպագրելու վերաբերյալ պահանջ: Մրցույթին մասնակցող կազմակերպությունների կողմից նման պահանջի ծրագրային իրականացումը հնարավոր համարվելու դեպքում, 2017 թվականի ընթացքում զուգահեռաբար կնախապատրաստվի և շրջանառության մեջ կդրվի «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծ: | |

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ